ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1965 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հ. Կ. ԿՈՒՍԻԿՅԱՆ

1964 թ. դեկտեմբերի 29-ին, Մոսկվայում, կյանքի 74-րդ տարում վախճանվեց ականավոր գիտնական-հայագետ, ՀՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր-դոկտոր Հովսեփ Կարապետի Կուսիկյանը։

Հովսեփ Կուսիկյանը ծնվել է Մոսկվայում 1890 թ. անվանի հայագետ, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Կարապետ Կուսիկյանի ընտանիքում։ Հանգուցյալի հայրը և մայրը դասավանդել են հայոց լեզու։

1900 թ. Հ. Կուսիկյանը ընդունվում է Լազարյան ճեմարանի նախապատրաստական դասարանը, շարունակելով ուսումը գիմնազիայում։ 1909 թ., ոսկե մեդալով գիմնազիան ավարտելուց հետո, նա ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը և ավարտում այն 1913 թվականին, իսկ 1916 թ. ավարտում է նաև իրավաբանական ֆակուլտետը։ Մոսկվայի համալսարանում նրան դասախոսություններ են կարդացել պրոֆեսորներ՝ ընդհանուր պատմության գծով՝ Ռ. Յու. Վիպպերը, իսկ հայոց պատմության գծով՝ Դ. Ա. Խալաթյանցը։ Լազարյան ճեմարանում նա անցնում է հին հայերեն, արաբերեն և պարսկերեն լեզուների դասընթացները։ Մոսկվայի համալսարանը նա ավարտում է լեզվաբանական լուրջ գիտելիքներ ձեռք բերելով, մասնագիտանալով հատկապես Բյուզանդիայի պատմության ուղղությամբ։

1913 թ. Հ. Կուսիկյանը դասնում է Լազարյան ճեմարանի ռուսաց և հայոց լեզուների դասատու, իսկ 1920 թվականից եղել է կենդանի արևելյան լեզուների Կենտրոնական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ։ Իր մանկավարժական գործունեությունը (1918—1921 թթ.) նա համատեղում էր ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատում կատարած աշխատանքի հետ, լինելով Հայկական բաժանմունքի քարտուղար։

1921—24 թթ. Հ. Կուսիկյանը Սմոլենսկի համալսարանի ընդհանուր պատմության պրոֆեսոր էր, դասախոսություններ էր կարդում հեղափոխական շարժումների պատմության դասընթացով։ 1924 թ. Սովետական Հայաստանի կառավարությունը նրան առաջ է քաշում ՍՍՌՄ օրենքների՝ «Вестник ЦИК, СНК и СТО СССР»-ի հայերեն թարգմանության պատասխանատու խմբագրի պաշտոնում։ Այնուհետև, տեղափոխվում է ՍՍՌՄ ԺԿԽ-ի «Собрание законов СССР»-ը խմբագրելու աշխատանքին, այդտեղ մնում է մինչև 1930 թ.։ 1926—1928 թթ. Ազգային և էթնիկական կուլտուրաների ինստիտուտում նա ունկնդրում է Ն. Յա. Մարի դասախոսությունները ընդհանուր լեզվաբանության հարցերի շուրջ, հատուկ կուրս անցնում «Հայերեն և վրացերեն լեզուներն իրենց նմանություններով ու տարբերություններով» թեմայով։

1930 թ. Հ. Կուսիկյանը ավագ գիտական աշխատողի պաշտոնով աշխատանքի է անցնում Արևելքի ժողովուրդների ինստիտուտում, որը հետագայում վերանվանվեց ՍՍՌՄ ԿԳԿ-ին առընթեր Ազգությունների ինստիտուտի (ավելի ուշ ՍՍՌՄ ժողովուրդների լեզվի ու գրականության ինստիտուտ), որտեղ աշխատում է մինչև 1940 թվականը, գիտական գործունեությունը զուգակցելով մանկավարժական աշխատանքի հետ։ 1931—32 թթ. մանկավարժական ինստիտուտում (այժմ Վ. Ի. Լենինի անվան), ինչպես նաև Արևելքի ժողովուրդների ինստիտուտի ասպիրանտների համար նա դասախոսում է ընդհանուր լեզվաբանություն։ 1936—1937 թթ. Երևանի համալսարանում և մանկավարժական ինստիտուտում նա հայերեն լեզվով դասախոսել է Բյուզանդիայի պատմություն և ընդհանուր լեզվաբանություն, դասախոսություններ կարդացել նաև Մոսկվայում՝ փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտներում։

Հայրենական մեծ պատերազմից հետո Հ. Կուսիկյանը ՍՍՌՄ ԳԱ լեզվի և մտածողության ինստիտուտի, իսկ 1950 թ. սկսած ՍՍՌՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտակցն աշխատող էր։ 1945 թ. Հ. Կուսիկյանը ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

Բազմարժանդակ է Հ. Կուսիկյանի գիտական-մանկավարժական գործունեությունը, որն արտահայտվել է ավելի քան 100 գիտական հոդվածներում և աշխատություններում։ Նրա բազմամյա աշխատանքի արդյունք է հանդիսանում 1950 թ. ՍՍՌՄ ԳԱ հրատարակությամբ լույս տեսած «Грамматика современного литературного армянского языка» մեծարժեք աշխատությունը, որի մեջ տրված է հայերենի քերականության բոլոր բաժինների՝ հնչունաբանության, ձևաբանության, բառակազմության և շարահյուսության հանգամանալից քննությունը։

Կյանքի վերջին տարիներին Հ. Կուսիկյանը գրեց երեք գիտական մենագրություն՝ «Очерки исторического синтаксиса армянского языка» (Москва, Изд. АН СССР, 1959), «Изменения в словарном составе армянского языка» (Москва, Изд. АН СССР 1964), «Сравнительная характеристика восточного и западного вариантов современного литературного армянского языка», որը դեռևս հրապարակված չէ և գտնվում է «Наука» հրատարակչությունում։ Նրա հեղինակությանն են պատկանում նաև բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ և դասընթացներ, ինչպես «История Византии» (դասախոսություններ կարդացված 1936 թ. ԼՊՀԻ-ում, 30 մամուլ ծավալով), «Историография» (դասախոսություններ կարդացված Երևանի համալսարանում 1938 թ.) և այլն։

Պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանը մեծ ավանդ է մուծել հայագիտության մեջ, նախապատրաստել է լեզվագետ և պատմաբան բազմաթիվ հայագետների։ Հանձինս Հ. Կուսիկյանի մեր գիտությունը կորցրեց ականավոր գիտնականի, որը որոշակի դեր է խաղացել հայագիտության զարգացման գործում։ Բայց ամենակարևորը, որ մեր կողմից երբեք չի մոռացվի, դա Հ. Կուսիկյանի արտասովոր էրուդիցիան էր, նրա գիտելիքների բազմակողմանիությունը, որը զուգակցվում էր պարզության, համեստության և արտասովոր մարդկայնության հետ։

Լ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ